

Պ Ա Տ Գ Ա Մ Ը

Ա. ԲԱՆԲԵՐՆԵՐ. —

Մըկրսիչը մեզ դրկեց, որ Քեզ բերենք իր ողջոյններ:
 Շաս կը բաղնայ որ ըստայ, որպէս ի հնումն, Քեզ տեսներ.
 Իր մանկական հին սէրէն ոչինչ երբեք է պակսեր,
 Հանդէպ Անոր՝ ում տըլաւ, ծաղկահասակ իր կեանքին մէջ,
 Հասուն խորհուրդ ու Յոյսեր, նըպասակներ եւ բոց մ'անւելչ:
 Կ'ուզէ Քեզմէ իմանալ, Դու որ Կոչմանդ ցարդ հընազանդ՝
 Փորձութեանց մէջ անյողպողդ հետ Աստուծոյ կեցար անվկանդ.
 Դո՞ւն ես Որուն յուսան Դարբ. նորոգելու աշխարհը հին:
 Ըսէ՛, կրնա՞ս, ո՛վ Նազիր, մըղել Սուրբ Մարտն ցրկէս վերջին,
 Քամահրելով Մողոմներ՝ — ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, ՀԱՃՈՅՔ եւ ՈՅԺ.
 Մինչեւ հնչէ յաղթանակդ՝ նըբաւակող մահուանըդ գոյծ:
 Ըսէ՛, կրնա՞ս հաւաքել Ազգն Սփիւռնէն տար աշխարհաց
 եւ մըկրսել Սուրբ Հոգւով, մաքրել Հոգիքն սիղմէն մեղաց:

Բ. ՅԻՍՈՒՍ. —

Գացէ՛ք պատմել Յովհաննէսին ի՛նչ որ տեսաք կամ լսեցիք:
 Հին դարերու նշմարտութեանց եւ վեր կ'առնեմ փողը յուշիկ.
 Զրկեալներուն կը փարօզուի Մեծ Աւետիս: Կ'ազատագրեմ
 Խմաստօրիւնը շրջաշուած՝ դպրոցներէն ներհակընդդէմ:
 Եկայ փրկել մեղաւորը, կանգնել կիներ վատաբերէր.
 Զերծել քրեաւուն ապաւնորհ. եւ խորհակել լուծն անընդէր:
 Կոյրեր տեսնեն, քաղեր կաղեր. կը մաքրուին պիղծ բորսներ.
 Խուլեր լըսեն, համբեր խօսին, մեռելներ իսկ կը յառնեն վեր:
 Օ՛րն պատմեցէ՛ք, հիւանդ քուժուին, կը զգաստանան ծերք անառակ,
 Ու մարդկային հոգւոյն Գոհարն նորէն բերուած է հրապարակ:
 ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՇԱՀԱՎԱՃԱՌՆ՝ (Սուրբ Գրոց մէջ քաղուած խորունկ՝
 Ռաբբիններէն), եւ տանիքէն կը փարօզեմ, չի՛ք ինչ ծածուկ:
 «Առաս Կեանքի» գետն է ուռած, մանուկներուն՝ կաթ անխառնախ.
 Կ'իջնէ հրեշտակն Սելովամի յոյլ ալիքներն յուզել յանախ:
 «Մարդու Որդին» է իմ տիկոյս, մէկն որ երկրին կը հակէ զիս.
 «Հիմաւուրց»ին Սիրոյն ցողն եմ, ա՛յս է ծագմանս ստուգանիւ:
 Երնէ՛կ անոր՝ որ իմ մասին չի վարանիր եւ չի՛ շրջնուր,
 Այլ կը պահէ փոքորկին դէմ՝ իր Հաւատքին բերդը ամուր:

Անթիլեասի Դպրեվանք

ՇԱՀԷ Մ. ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՍՊԱՐԵԱՆ

Փետր. 26, 1931